ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"12" հունիսի 2012թ. № 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ <<ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ>> ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ <<ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի բ) և 1.19 կետի ա) ենթակետերի դրույթներով, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 08.02.05.03.<<Մշակութային միջոցառումների իրականացում>> ծրագրով նախատեսված հատկացումների՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոն կազմակերպելու նպատակով 2.500.0 հազ. դրամ տրամադրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության <<Կապանի մշակույթի կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով համապատասխան պայմանագիր:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը, կանոնադրությունը, անցկացման ծրագիրը, ծախսերի նախահաշիվը և ժամանակացույցը՝ համաձայն 1-5 հավելվածների:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ միջոցառումների և գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հունիսի 12
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հունիսի 12- ի
N 73 - Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և ամցկացման

1. Ս. Խաչատրյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետ, նախագահ
2. Վ. Գրիգորյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ , /նախագահի տեղակալ/
3. Լ. Հարությունյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
4. Ա. Մարդյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
5. Ս. Դավթյան	-	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
6. Ա. Աթայան	-	Կապանի քաղաքապետ /համաձայնությամբ/
7. Ն. Ոսկանյան	-	Գորիսի քաղաքապետ /համաձայնությամբ/
8. Ս. Հայրապետյան	-	Մեղրիի քաղաքապետ /համաձայնությամբ/
9. Մ. Զաքարյան	-	Ագարակի քաղաքապետ /համաձայնությամբ/
10. Վ. Գևորգյան	-	Քաջարանի քաղաքապետ /համաձայնությամբ/
11. Ա. Հակոբջանյան	-	Սիսիանի քաղաքապետ /համաձայնությամբ/
12. Վ. Արզումանյան	-	«Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հունիսի 12-ի
N 73 - Ա որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

Նպատակը և խնդիրները

ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում,առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, ֆիզկուլտուրայի ևսպորտի ուզզությամբ կատարվոզ աշխատանքների խթանում, նպաստավոր պայմանների ստեղծում, ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի արմատավորո

Ղեկավարումը

Մրցույթի կազմակերպման և անցկացման ընդհանուր ղեկավարումը իրագործում են ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժինը և «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ը

Մասնակիցները

ա/Մրցույթին մասնակցում են մարզի համայնքների սպորտային ընտանիքներ, որոնք ընդգրկված են 3 տարիքային խմբերում:

բ/ Տարածաշրջաններում անցկացված մրցույթներում հաղթող ճանաչված լավագույնսպորտային ընտանիքները ըստ տարիքային խմբերի կմասնակցեն մարզային փուլին.

գ/ Մարզային փուլում անցկացված մրցույթում հաղթող ճանաչված լավագույն սպորտային ընտանիքները ըստ տարիքային խմբերի կմասնակցեն հանրապետական եզրափակիչ փուլին.

Մրցույթի անցկացման վայրը և ժամկետը

Մրցույթի մարզային փուլը անց է կացվելու 2012թ. հունիս ամսին Կապան քաղաքում .

Մրցույթի հանրապետական փուլը անց է կացվելու 2012թ. հուլիս ամսին Ծաղկաձոր քաղաքում.

Ծախսերը

Եզրափակիչ փուլի մրցույթի ծախսերը հոգում է կազմակերպող կազմակերպությունը.

Հայտերը

Մարզային փուլի մասնակցության հայտերը ներկայացնել մարզպետարանի մշակույթի և սպորտի բաժին , մինչև ս/թ հունիսի 15-ը. հեռ. 0285-2-36-02:

Պարգևատրում

Մրցույթի 2-րդ՝ մարզային փուլի հաղթողները, ըստ տարիքային խմբերի, կպարգևատրվեն ՀՀ Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով ու դրամական մրցանակներով :

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված 3

ՀՀ Սյունիքի մարզպետի

2012թ. հունիսի 12 -ի

N 73 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

- Փառատոնի նպատակն է՝ անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, բնակչության առողջության ամրապնդում,առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, նպաստավոր պայմանների ստեղծում, ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի արմատավորում:

- Փառատոնը անց է կացվելու 3 փուլով, առաջին փուլը մարզի քաղաքային համայնքներում, 2-րդ փուլը՝մարզային փուլ և 3-րդ փուլը եզրափակիչ՝ հանրապետական փուլ:
- Համայնքային փուլում հաղթող ճանաչված լավագույն մարզական ընտանիքները ըստ տարիքային խմբերի կմասնակցեն մարզային փուլին:

- Մարզային փուլում հաղթող ճանաչված լավագույն սպորտային ընտանիքները ըստ տարիքային խմբերի կմասնակցեն հանրապետական եզրափակիչ փուլին՝ Ծաղկաձորի գլխավոր համալիրում:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2012թ. հունիսի 12-ի
N 73 -Ա որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

Հ/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալում	4216.21	400.0
2	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239.11	1.680.0
3	Մարզական հագուստ	4261.21	420.0
	Ընդամենը		2500.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված 5
ՀՀՍյունիքիմարզպետի
2012թ. հունիսի 12-ի
N 73 -Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մարզամշակութային փառատոնի կազմակերպման և անցկացման

Հ/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	Մրցույթի I փուլ	Հունիս 2012թ.	մարզի համայնքներում
2	Մրցույթի II փուլ	Հունիս 2012թ.	Կապան քաղաք
3	Մրցույթի մասնակիցների դիմավորում	28.06.2012թ. ժամը 10^{30}-ին	Կապանի մարզադաշտ
4	Մրցույթի բացումը	28.06.2012թ.ժամը 11^{00}	Կապանի մարզադաշտ
5	Մարզային մրցույթի եզրափակիչ ելույթներ Մրցանակաբաշխություն, փառատոնի փակման արարողություն	11-00-18-00 18-00-19-00	Կապանի մարզադպրոց
6	Մրցույթի մասնակիցների ճանապարում	19-00-20-00	Կապանի մարզադպրոց
7	Մրցույթի եզրափակիչ՝հանրապետական փուլ	08-14 հուլիս	Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան